ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ դասվար

Թեմա՝ Կարդալու տարրական կարողության ձևավորման դժվարություններն առաջին դասարանում և դրանց հաղթահարման ուղիները

Կատարող՝ Երևանի Աշոտ Նավասարդյանի անվան թիվ 196 հիմնական դպրոցի ուսուցչուհի Իրա Ղազարյան

Ղեկավար՝ մ.գ.դ. Ջ. Գյուլամիրյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ 5

1.1 Կարդալու տարրական կարողության ձևավորման հիմնական առանձնահատկությունները առաջին դասարանում 5

1.2 Կարդալու տարրական կարողության ձևավորման հիմնական դժվարությունները առաջին դասարանում 9

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԴԱԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ 13

2.1 Ինչպե՞ս հաղթահարել կարդալու դժվարությունները առաջին դասարանում 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ բավարար և անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել համապատասխան գրականություն, իսկ ուսումնասիրությունն առաջին հերթին ենթադրում է կարդալու տարրական կարողությունների առկայություն: Կարդալու հմտությունները մենք սովորում ենք դպրոց հաճախելուն զուգահեռ, ավելի կոնկրետ հենց առաջին դասարանում, երբ ուսումնասիրում են տառերը և դրանց օգնությամբ սկսում կարդալ բառեր և նախադասություններ: Այդ իսկ պատճառով կարդալու համապատասխան հմտությունների ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրումն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ այն ծառայում է անձին ամբողջ կյանքի ընթացքում:

Գտնում ենք, որ առաջին հայացքից պարզ թվացող այս հմտությունը ունի ձևավորման մի շարք առանձնահատկություններ և դժվարություններ, որոնց ճիշտ հաղթահարումից է կախված հետագայում սահուն և գեղեցիկ կարդալու արվեստը: Կարող է թյուր կարծիք լինել, թե բոլոր չափահաս, հասուն մարդիկ տիրապետում են վարժ կարդալու հմտություններին, սակայն եթե փորձենք յուրաքանչյուրի կարդալու հմտությունները ստուգել, կհամոզվենք, որ քչերն են տիրապետում կարդալու բոլոր հմտությունների:

Հենց վերոնշյալ նկատառումներից ելնելով չափազանց կարևոր դերակատարում ունեն այն մեթոդներն ու հմտությունները, որոնք դրվում են առաջին դասարանում աշակերտներին կարդալու հմտությունների ձևավորման հարցում: Իրականում մի շարք հմտությունների զարգացման հարցում շատ մեծ նշանակություն ունի, թե ինչպես են դրվել դրանց ձևավորման հիմքերը: Այս առումով մենք այն համոզմունքն ունենք, որ ինչպիսի հիմք դրվում է, այնպես էլ շարունակվում է հետագայում, ուստի առաջին դասարանում կարդալու հմտությունների ճիշտ

ձևավորումն ու զարգացումը, դրանցում առկա դժվարությունների հաղթահարումը իրենից մեծ կարևորություն է ներկայացնում:

Վերոգրյալ նկատառումների հաշվառմամբ սույն ուսումնասիրության շրջանակներում քննարկման առարկա ենք դարձրել ինչպես կարդալու հմտությունների ձևավորման առանձնահատկությունները, այնպես էլ դրանց դժվարությունների հաղթահարման ուղիների մշակումը, որպիսի հարցերի քննարկումը հետազոտական աշխատանքների շրջանակներում, մեր կարծիքով, իրենից մեծ հետաքրքրություն և կարևորություն է ներկայացնում:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Սույն ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում բացահայտել կարդալու տարրական կարողության ձևավորման դժվարություններն առաջին դասարանում և դրանց հաղթահարման ուղիները:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար մեր առջև դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ բացահայտել կարդալու կարողության ձևավորման հիմնական առանձնահատկությունները առաջին դասարանում,
- ✓ ներկայացնել կարդալու կարողության ձևավորման հիմնական դժվարությունները առաջին դասարանում,
- ✓ ուսումնասիրել կարդալու կարողության ձևավորման դժվարությունների հաղթահարման ուղիները:

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

1.1 Կարդալու տարրական կարողության ձևավորման հիմնական առանձնահատկությունները առաջին դասարանում

Առաջին դասարանում ուսանելու ժամանակահատվածը յուրաքանչյուր անհատի ձևավորման և կայացան հարցում չափազանց կարևոր դերակատարում ունեցող փուլ է, որի ճիշտ և արդյունավետ կազմակերպումից է կախված դպրոցական կյանքի հետագա ընթացքը: Ուստի առանցքային նշանակություն ունեն այն գիտելիքներն ու հմտությունները, որոնց հիմքը դրվում է հենց առաջին դասարանում: Այդպիսի հմտություններիս թերևս ամենակարևորն ու գլխավորը կարդալու կարողությունների ձևավորումն է:

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը[1]:

Ընթերցանությունը որպես խոսքային գործունեության տեսակ՝ տեղեկատվություն ստանալու աղբյուր է, մտավոր, իմացական բարդ գործողություն: Ուսուցման տարբեր փուլերում ու մակարդակներում ընթերցանության գործընթացները յուրօրինակ ջանքեր են պահանջում սովորողից՝ կարդացողից: Վարժ կարդացողը բառերն ընկալելու համար առանձին տառերը չի կապում իրար, այլ ըմբռնման մի ակտի միջոցով միանգամից կարդում է ամբողջական բառեր ու

[1] Ինչպես օգտագործել «Ինքնուրույն ընթերցանության նյութեր» ժողովածուն, Նախաշավիղ, Երևան, 2010, էջ 9:

նախադասություններ[2]: Սկսնակ կարդացողի ընթերցումը զգալի կերպով տարբերվում է վարժ կարդացողի ընթերցումից: Սկսնակի կարդալու գործողության առանձին աստիճանները կամ բաղադրամասերը խիստ ընդգծված ձևով են հանդես գալիս և պարզորոշ կերպով զանազանվում ու գիտակցվում են:

Ընթերցանության մեջ առանձնացվում են հետևյալ կարևոր կետերը.

– իմաստի գաղափար

– մտքի փոխանցում

– հեղինակի մտքի փոխանցում ընթերցողին

– հետադարձ կապի ձևավորում[3]:

Լինելով ընկալողական խոսքային գործունեություն, ըստ էության, ընթերցանությունն ինտերակտիվ գործընթաց է հեղինակի և ընթերցողի միջև, որն ուղղված է տեքստի տեղեկատվության ընկալմանը, ինչին հասնելու համար անհրաժեշտ է աշակերտների մոտ զարգացնել արդեն ձևավորված ընթերցանական կարողությունները: Ընթերցանությունը նախադրյալներ է ստեղծում նոր գիտելիքների, մշակութային հաղորդակցման (միջմշակութայնություն), բառապաշարի, քերականության և արտասանական կարողությունների զարգացման համար, ներառյալ բանավոր և գրավոր խոսքի կարողությունները[4]:

Ղ. Աղայանը նկատում է, որ ընթերցանության միակ արժեքն այն է, որ ընթերցողի առջև բացում է անհատնում փորձերի շտեմարաններ, որ մարդ իր տանը նստած կարդալու միջոցով շրջում է ամբողջ աշխարհը, դուրս գալիս երկրագնդից, մտնում Երկրի խորքերը, իջնում ծովի ու օվկիանոսի հատակը, իմանում է տարբեր ազգերի կենցաղի, սովորույթների, ապրելակերպի մասին: «Բայց և այնպես, սոքա բոլորը փորձեր են, որոնք այն ժամանակ միայն կարող են լայնացնել ընթերցողի

---

[2] Harmer J., The Practice of English Language Teaching, Pearson, Longman, 2012, էջ 187:

[3]Ասատրյան Ս., Բնագիր տեքստերի կիրառման արդյունավետությունն անգլերենի ընթերցանության ուսուցման գործընթացում, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2(43), «Լինգվա» հրատ., էջ 313:

[4] Նույն տեղում, էջ 314:

հասկացողության շրջանը, երբ ընթերցողի բնությունը նոցա մարսելու չափ զարգացումն ունի, այդ փաստերից, այդ հանգամանքներից ուղիղ հասկացություն կազմելու կարողություն ունի[5]»:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

- Ճիշտ կամ անսխալ կարդալ
- Վարժ կամ սահուն կարդալ
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ
- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
- Արագ կարդալ առաջարկված բնագիրը:

ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի և տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի քերականական ձևը (այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքն ու թիվը, ժամանակը), երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառերն ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան[6]:

Սահուն կամ վարժ կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով

---

[5] Աղայան Ղ. Երկեր,հատոր 4, Եր. 1950, էջ 361:

[6] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006, էջ 116:

ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը (ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդիրների կողմից):

Հասկանալով կամ գիտակցելով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը: Վերլուծելը, թերևս, այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում:

Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է:

Կարդալը արտահայտիչ կամ գեղարվեստորեն է համարվում այն ժամանակ, երբ կարդացողը կարողանում է մտովի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ: Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը:

Արագ կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորել: Արագ կարդալու միջոցով կարճ ժամանակամիջոցում շատ տեղեկություն կարելի է ստանալ[7]:

Եթե փորձենք ամփոփել վերոնշյալ բոլոր տարբերակները՝ կարող ենք պարզ հետևություն անել առ այն, որ կարդալու ինչ տեսակով էլ իրականացվի ընթերցանությունը, պետք է հաշվի առնվեն այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են տեքստում առկա կետադրական նշանները, հեղինակի արտահայտած միտքն ու իմաստը կարդալու միջոցով փոխանցելը, ինչերանգների ճիշտ գնահատումն ու կիրառումը: Գտնում ենք, որ այս բաղադրիչները կարևոր նշանակություն ունեն ինչպես հասկանալով կամ

[7] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006, էջ 119:

գիտակցելով կարդալու, այնպես էլ արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալու դեպքերում:

1.2 Կարդալու տարրական կարողության ձևավորման հիմնական դժվարությունները առաջին դասարանում

Ինչպես արդեն նշել ենք, առաջին դասարանում են դրվում մի շարք հմտությունների ձևավորման հիմքերը, որոնց շարքում իր ուրույն տեղն ունի հենց կարդալու կարողությունների ձևավորումը: Սակայն առաջին դասարանն առանձնանում է ոչ միայն իր կարևորությամբ, այլև առաջին դասարանում ձևավորվող հմտությունների ձևավորման դժվարություններով, ուստի շատ կարևոր է նաև այդ դժվարությունների ուսումնասիրումն ու դրանց հաղթահարման ուղիների մշակումը:

Առաջին դասարանում աշակերտները ուսուցչի օգնությամբ ուսումնասիրում են հայերենի այբուբենը, սովորում են յուրաքանչյուր տառի արտասանության առանձնահատկությունները՝ փորձելով կազմել բառեր ու կարդալ դրանք: Այս գործընթացը, բնականաբար, չի կարող հարթ ընթանալ, ուստի առաջ են գալիս մի շարք դժվարություններ, որոնց ուսումնասիրումը շատ կարևոր է դրանց հաղթահարման համար:

Կարդալու դժվարությունները պայմանավորված են նրանով, որ անձը կարդում է ու չի ընկալում իր կարդացածի իմաստը, դժվարանում է տառը համադրելով տառին, վանկը՝ վանկին ստանալ բառ, չի կենտրոնացնում ուշադրությունը և կարդալու գործողությունն ավարտին չի հասցնում:

Ըստ Ռոն Դեյվիսի ծրագրի[8], որի հիմքում ուշադրության կենտրոնացման գաղափարն է, կարդալու գործընթացի խանգարումը պայմանավորված է ուշադրությունը կենտրոնացնելու դժվարություններով: Ուշադրության շեղումը վերացնելու համար կարելի է ուշադրությունը կենտրոնացնող կետեր նշանակել այն նյութի վրա, որը պատրաստվում եք կարդալ: Ուշադրությունը շեղվում է կարդալիս անծանոթ սիմվոլի՝ բառի հանդիպելիս, որը խանգարում է ինքնատիրապետմանն ու ինքնավերահսկողությանը, որոնք չափազանց կարևոր են արագ տպավորությունների ու ժամանակի զգացողության զարգացման համար:Կարդալու որակը բարձրացնելու համար կարևոր է վերահսկել ուշադրությունը շեղող գործոնները:
Սիմվոլները ճանաչելու երեք հիմնական գործոն կա.

- սիվոլի՝ բառի ճանաչումը
- դրա հնչողությունը,
-գաղափար սիմվոլի՝ բառի կամ հասկացության նշանակության մասին:

Կարդալու դժվարություններ ունեցող անձինք մտածում են բացառապես պատկերավոր, նրանք չեն կարևրում բառի նշանակությունը, նրանց համար անծանոթ սիմվոլը՝ բառը ունի որոշակի պատկեր, որոշակի հնչյուն:

Իրականացնելով կարդալու հմտությունների ձևավորման դժվարությունների վերաբերյալ համապատասխան գրականության ուսումնասիրում, ինչպես նաև առաջնորդվելով մեր կուտակած փորձով, ցանկանում ենք առանձնացնել կարդալու կարողությունների զարգացման հետևյալ դժվարությունները.

- առաջին դժվարությունը պայմանավորված է նախ այբուբենի տառերի իմացության վատ կամ ոչ բավարար մակարդակով, մասնավորապես, երբ սովորողը իդեալական չի տիրապետում բոլոր տառերին և դրանց արտասանության կանոններին, առաջին հայացքից շփոթության մեջ է

[8] https://www.dyslexia.com/davis-difference/davis-theory/theory-davis-methods/

հայտնվում տարբեր բառեր և նախադասություններ տեսնելու արդյունքում:

- երկրորդ կարևոր դժվարությունը վերաբերում է սովորողների ինքնուրույնության բացակայությանը հենց կարդալու և սեփական սխալը գտնելու հարցերում: Մասնավորապես, երեխաները հատկապես առաջին դասարանում ունեն դժվարություններ գրքում գրված և իրենց արտասանած բառերը համեմատելու և այդ ձևով սխալները գտնելու հարցերում:
- հաջորդ էական դժվարությունը վերաբերում է ուշադրության համապատասխան աստիճանի բացակայության խնդրին: Երբ երեխան բավարար ուշադրություն չի կենտրոնացնում կարդացվող նյութին, նրա աչքից կարող են վրիպել որոշ տառեր, ինչի արդյունքում կարդացված բառը կլինի սխալ:
- մյուս դժվարությունը հանդիպում է այն դեպքերում, երբ երեխան բացարձակ չի ընկալում կարդացվող նյութի իմաստը և չի կարողանում ներթափանցել թեմայի մեջ[9]:

Հարկ ենք համարում նշել, որ առաջին դասարանում կարդալու կարողությունների ձևավորման հարցում կարող է մեծ դժվարություն հանդիսանալ նաև երեխաների անհատական լեզվական և խոսքային բարդությունները, կոնկրետ տառեր կամ հնչյուններ արտաբերելու անկարողությունը: Իհարկե հարկ է նշել, որ նշված դժվարությունների հաղթահարումը առավել մեծ ջանքեր է գործադրում և լրացուցիչ մասնագիտական աշխատանք:

Ամփոփելով կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների վերաբերյալ ներկայացված մոտեցումները՝ կարող ենք նշել, որ այդ դժվարությունները կարող են դրսևորվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին-

[9] Костромина С.Н. Нагаева Л.Г. Как преодолеть трудности в обучении чтению. Упражнения, задания, конспекты занятий, М., 2006:

առանձին: Այս դժվարությունների դրսևորումներն ունեն նաև մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակություններով, ուստի այդ դժվարությունների հաղթահարման հարցում ևս պետք է հիմք ընդունենք յուրաքանչյուր աշակերտի, ինչպես նաև ընդհանուր դասարանի ընդունակությունների մակարդակն ու առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԴԱԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

2.1 Ինչպես հաղթահարել կարդալու դժվարությունները առաջին դասարանում

Աշխատանքի նախորդ հատվածներում արդեն խոսեցինք կարդալու կարողությունների ձևավորման կարևորության, ինչպես նաև այդ հարցում առաջացող դժվարությունների վերաբերյալ, որոնք գլխավորապես հանդիպում են հենց առաջին դասարանում: Այս առումով գտնում ենք, որ կարևոր է ոչ միայն կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների բացահայտումը, այլև դրանք հաղթահարելու ուղիների մշակումը, քանի որ միայն այդ պարագայում կարող ենք արձանագրել կատարված ուսումնասիրության արժեքն ու արդիականությունը:

Ըստ այդմ, ցանկանում ենք ներկայացնել կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների հաղթահարման հետևյալ ուղիներն ու մեթոդները.

- առաջին կարևոր քայլը, որ պետք է ապահովել այս հարցում, հայերենի այբուբենի կատարյալ սերտումն է, տառերի, հնչյունների ճիշտ արտասանությունը: Այս քայլը ամբողջական է դառնում, երբ սովորելուց բացի ապահովվում է դրանց կիրառումն ու գործածությունը, որի շնորհիվ աշակերտները ամբողջական պատկերացում են կազմում ձեռք բերված գիտելիքների վերաբերյալ:
- հաջորդ կարևոր քայլը երեխաների մոտ խոսքային հմտությունների ձևավորումն ու զարգացումն է, որը կարող է իրականացվել ինչպես բառերի ընթերցանության, այնպես էլ նկարների և պատկերների վերաբերյալ պատմություններ պատմելու ձևով:
- մյուս միջոցը, որը մեր դիտարկմամբ կարող է նպաստել կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների հաղթահարմանը, վերաբերում է երեխաների մեջ ինքնուրույնության ձևավորմանը՝ գրքում

գրվածը և իրենց արտաբերածը միմյանց հետ համեմատելու և ինքնուրույնաբար սեփական սխալները գտնելու ձևով:

- կարևոր ենք համարում նաև երեխաների ուշադրության սևեռումը ընթերցանությանը, ինչին կարելի է հասնել նախապես ընթերցվող նյութի մասին հետաքրքիր ձևով խոսելու, նյութից որոշ դրվագներ պատմելու և մնացածը կարդալու հետաքրքրություն առաջացնելու ձևերով:

Նախ հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ բոլոր մեթոդների կիրառումը պետք է իրականացվի առաջին դասարանի երեխաների տարիքային և անհատական կարողությունների և ընդունակությունների հաշվառմամբ, այսինքն՝ այնպիսի ձևով, որը հետաքրքիր է երեխաներին և օբյեկտիվորեն կարող է ընկալվել նրանց կողմից: Այս երկու բաղադրիչների հաշվառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է մեծապես նպաստել սահմանված նպատակի, այն է՝ կարդալու կարողությունների ձևավորման իրագործմանը:

Այս առումով գտնում ենք, որ առաջին դասարանում սովորող երեխաներին ամենաշատը հետաքրքրում են խաղերն ու խաղային տեխնիկայով մատուցվող նյութը: Ըստ այդմ, առաջարկում ենք կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների հաղթահարման համար կիրառել հետևյալ մեթոդները.

Որպեսզի երեխաների մոտ ձևավորենք ներկայացված նյութը մի քանի անգամ կարդալու ցանկություն, պետք է առաջադրենք այնպիսի հանձնարարություն, որի կատարման համար սովորողները ստիպված են պարբերաբար անդրադառնալ ներկայացված տեքստին.

Օրինակ՝ երեխաներից յուրաքանչյուրին տրամադրում ենք հետևյալ տեքստը և հանձնարարում լրացնել աղյուսակը:

Առաջադրանքի օրինակ 1.

Արամը և Անին վազում էին անտառում:

Արամն առաջարկեց գնալ գետի մոտ:

Անին հրաժարվեց՝ ասելով.

-Ոչ, ես վախենում եմ գետում խեղդվելուց:

-Բայց մենք կարող ենք չմտնել գետը,- ասաց Արամը:

-Ոչ, ամեն դեպքում գետի մոտ վտանգավոր է:

Հերոսները	Ի՞նչ արեցին
Արամը	
Անին	

Առաջադրանքի օրինակ 2.

Իմ որսորդ ընկերը նապաստակ բերեց երեխաներիս համար: Նապաստակը դարձավ մեր ընտանիքի անդամը: Երեխաներս երջանիկ էին: Բոլորը սիրով խնամում էին նապաստակին: Նապաստակը միշտ կանգնում էր պատուհանի մոտ: Նա երկա՛ր-երկա՛ր նայում էր հեռու: Երևի նա հիշում էր իր ընկերներին: Մի երեկո նապաստակը փախավ անտառ:

Մտածի՛ր՝ ի՞նչ հաջորդականությամբ են դասավորված տրված նախադասությունները տեքստում: Ըստ այդ հաջորդականության՝ համարակալի՛ր դրանք:

Այս վարժությունը նպատակաուղղված է զարգացնելու կարդալու միջոցով իմաստն ընկալելու կարողությունը:

- ☐ Մի երեկո նապաստակը փախավ անտառ:
- ☐ Նապաստակը միշտ կանգնում էր պատուհանի մոտ:
- ☐ Բոլորը սիրով խնամում էին նապաստակին:

- Երեխաներս երջանիկ էին:

Քանի որ արդեն նշել ենք, թե ինչ կարևոր նշանակություն ունի երեխաների խոսքային հմտությունների զարգացումը կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների հաղթահարման հարցում, հաջորդ առաջադրանքը ցանկանում ենք ներկայացնել նկարների տեսքով և աշակերտներին հանձնարարել պատմել նկարները.

Առաջադրանի օրինակ 3.

Նկար 1.

Նկար 2.

Կարդալու գործընթացի դժվարությունները հաղթահարելու համար առաջարկում ենք նաև հետյալ մեթոդների կիրառումը.

- Կարդալու դժվարություն ունեցող երեխան պետք է հայացքը տանի ձախից աջ, վազող տողի սկզբունքով
- Երեխաներին պետք է սովորեցնել հիշել տառերի խումբը որպես բառ
- Կարդացածի իմաստի ընկալում, երեխաներին պետք է մղել պատկերավոր մտածողությունը զուգակցել կարդալու գործընթացի հետ:

Ամփոփելով ներկայացված մոտեցումները՝ կարևոր ենք համարում ընդգծել, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարդալու տարրական կարողությունների դժվարությունների հաղթահարման հարցում պետք է հիմք ընդունել յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակություններ ու կարդալու անհատական խնդիրներն ու առանձնահատկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ուսումնասիրության ընթացքում ներկայացված տեսակետներն ու մոտեցումները, ինչպես նաև կատարված հետազոտության արդյունքները՝ ցանկանում ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

- կարդալու կարողությունների ճիշտ ձևավորումը և զարգացումը կարևոր դերակատարում ունեն յուրաքանչյուր անհատի ձևավորման, հետագա կյանքի, կրթության շարունակության և մասնագիտական հաջողությունների հարցում, ուստի այս կարողությունների ձևավորման հիմքերը պետք է դրվեն խելամիտ և արդյունավետ մոտեցումների համադրմամբ:
- առաջին դասարանում դրվում են յուրաքանչյուր աշակերտի գիտելիքների ձևավորման հիմքերը, սակայն այս հարցում իր ուրույն տեղն ունի հենց կարդալու կարողությունների ձևավորումը, որն օժտված է ինչպես մի շարք առանձնահատկություններով, այնպես էլ դժվարություններով:
- Կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունները կարող են տարբեր լինել՝ կախված կոնկրետ դասարանի ընդունակություններից և անհատական առանձնահատկություններից, սակայն բոլոր դեպքերում դրանք պայմանավորված են տառերի և հնչյունների կատարյալ ընկալման, կարդացվող նյութի իմաստի ընկալման, ուշադրության կենտրոնացման խնդիրներով:
- կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների հաղթահարման հարցում պետք է ուշադրություն դարձնել երեխաների ինքնուրույնության զարգացմանը, ուշադրության կենտրոնացմանը, ինչպես նաև խոսքային հմտությունների զարգացմանը:
- Կարդալու կարողությունների զարգացումը առաջին դասարանում կարող է արդյունավետ կերպով իրականացվել հատկապես խաղային մեթոդների կիրառմամբ, որոնք կնպաստեն կարդալու կարողությունների ձևավորման գործընթացի հետաքրքրության և արդյունավետության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ. Երկեր,հատոր 4, Եր. 1950, էջ 361:
2. Ասատրյան Ս., Բնագիր տեքստերի կիրառման արդյունավետությունն անգլերենի ընթերցանության ուսուցման գործընթացում, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2(43), «Լինգվա» հրատ.:
3. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006,
4. Ինչպես օգտագործել «Ինքնուրույն ընթերցանության նյութեր» ժողովածուն, Նախաշավիղ, Երևան, 2010,
5. Костромина С.Н. Нагаева Л.Г. Как преодолеть трудности в обучении чтению. Упражнения, задания, конспекты занятий, М., 2006:
6. Harmer J., The Practice of English Language Teaching, Pearson, Longman, 2012, էջ 187:
7. https://www.dyslexia.com/davis-difference/davis-theory/theory-davis-methods/